ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱՃՅՈՒՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղը հանդիսանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանում, որը ուսումնամեթոդական գործընթացի կազմակերպման հիմնական իրականացնողներից է: կրթաճյուղը միավորում է ընդհանուր պատրաստականություն ապահովող առարկաներ: Կրթաճյուղում իրականացվում են ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական, դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Կրթաճյուղում իրականացվող աշխատանքները քննարկվում են կրթաճյուղի նիստերում:

2006թ-ին ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում , որպես ուսումնամեթոդական պրոցեսի հիմնական իրականացնող ստորաբաժանումներ, ստեղծվեցին թվով երեք կրթաճյուղեր, որոնց թվում <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղը 5 հաստիքներով՝ Կրթաճյուղի պետ, 2 ավագ դասախոս և 2 դասախոս:

ՀՀ ոստիկանության պետի 22.07.2011թ թիվ 1871-Ա հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնը դարձավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կազմի մեջ մտնող ստորաբաժանում և կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ստեղծվեց թվով չորս կրթաճյուղեր որոնց թվում <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղը 4 հաստիքներով՝ Կրթաճյուղի պետ, 2 ավագ դասախոս և 1 դասախոս: Կրթաճյուղը վերանվանվեց <<Ընդհանուր մասնագիտական պատրաստականություն>> կրթաճյուղ: ՀՀ ոստիկանության պետի 28.12.2013թ թիվ 4545-Ա հրամանի համաձայն կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրճատվեցին կրթաճյուղերի թիվը չորսից դառնալով երկուսը: Գործող կրթաճյուղերի թվում <<Ընդհանուր մասնագիտական պատրաստականություն>> կրթաճյուղը 7 հաստիքներով՝ Կրթաճյուղի պետ, 3 ավագ դասախոս և 3 դասախոս: Կրթաճյուղը վերանվանվեց <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղ:

ՀՀ ոստիկանության պետի 22.10.2014թ թիվ 159-ԱԳ հրամանի համաձայն կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրճատվել է <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղի 1 դասախոսի հաստիքը, որի արդյունքում <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղի հաստիքային կազմը հետևյալն է՝ Կրթաճյուղի պետ, 3 ավագ դասախոս և 2 դասախոս, որը գործում է միչ օրս :

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱՃՅՈՒՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղը հանդիսանալով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի ուսումնամեթոդական գործընթացի կազմակերպման հիմնական իրականացնողներից՝ իրականացնում է հետևյալ կրթական ծրագրերը՝

- գՀՀ ԿԳ նախարարի կողմից 08.12.2010թ 1676-Ն հաստատված Նախնական մասնագիտական /արհոստագործական/ կրթության 0101 «Ոստիկանական գործ» մաստագիտության «Ոստիկան» որակավորման պետական կրթական չափորոշիչին համապատասխան՝ 6 ամսյա դասընթացներ, որը ՀՀ կառավարության 01.03.1018 թվականի թիվ 209-ն որոշմամբ մինչև 2020 թվականը սահմանվել է 3 ամիս ժամկետով:
- ՀՀ կառավարության 23.01.2003թ թիվ 174-Ն հաստատված <<Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները>> որոշման համաձայն՝ Ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման /որակավորման/ դասընթացներ:

Ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի խնդիրներն ու նպատակներն են՝

1. Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան սովորողներին ոստիկանական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների տրամադրումը,
2. Սովորողների զարգացման և նրանց ընդհանուր պատրաստվածության մակարդակի բարձրացման ապահովումը,
3. Սովորողներին ընդհանուր հումանիտար և սոցիալ-հասարակական գիտելիքների տրամադրումը,
4. Դասախոսական անձնակազմի մանկավարժական գործունեության և սովորողների կողմից մասնագիտական ուսումնական ծրագրերի յուրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղը իրականացնում է ուսումնական , ուսումնամեթոդական, ուսումնադաստիրակչական աշխատանքներ:

Կրթաճյուղի անձնակազմի կողմից մշակվում և կիրառվում են առարկայական ծրագրերը, թեմատիկ պլանները, առարկայական թեմաներից բխող պլան-կոնսպեկտները, իրականացվում են դասացուցակով նախատեսված դասախոսությունները, սեմինար և գործնական պարապմունքները, ինչպես նաև ստուգարքների ընդունման ու վերահանձման աշխատանքները, անցկացվում են խորհրտատվություններ և անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ պարապմունքներ:

ՈՒսումնական պրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվում և կիրառվում են դասավանդման ինտերակտիվ մեթոդներ և դիդակտիկ նյութեր, թարմացվում է լեկցիոն ֆոնդը և ուսումնանյութական բազան, իրականացվում են դասալսումներ, բաց և ցուցադրական պարապմունքներ, ամփոփվում և քննարկվում են դասախոսական անձնակազմի կողմից իրականացվող ուսումնամեթոդական, ուսումնադաստիրակչական աշխատանքները, մշտական կապ է պահպանվում ՀՀ ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների հետ:

Կրթաճյուղի դասախոսական կազմի կողմից իրականացվում է ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական կրթության <<ոստիկանական գործ>> մասնագիտության <<Ոստիկան>> որակավորման սովորողների մասնագիտական պրակտիկայի կազմակերպչա-մեթոդական ղեկավարումը:

Կրթաճյուղում իրականացվող աշխատանքները քննարկվում են կրթաճյուղի նիստերում:
Կրթաճյուղը միավորում է ընդհանուր պատրաստականություն ապահովող առարկաներ՝

1. «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ» մոդուլ,
2. «Հաղորդակցման հմտություններ» մոդուլ,
3. «Ոստիկանության գործունեության կառավարում» մոդուլ,
4. «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը» մոդուլ:
5. «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր»:
6. «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ»,
7. «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ»,
8. «Պատմություն»,
9. «Ռուսաց լեզու»,
10. «Անգլերեն լեզու»,
11. «Էկոլոգիայի հիմունքներ»,

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ

1. Ոստիկանության փոխգնդապետ Արմենակ Արտուշի Ալեքսանյան – կրթաճյուղի պետ
2. Ոստիկանության գնդապետ Լևոն Խաչիկի Գալստյան – ավագ դասախոս
3. Ոստիկանության փոխգնդապետ Խաչատուր Խանանի Թովմասյան – ավագ դասախոս
4. Ոստիկանության փոխգնդապետ Սենյորա Ենոքի Իսունց – ավագ դասախոս
5. Ոստիկանության մայոր Հայարփի Սերժի Քեշիշյան – դասախոս
6. Ոստիկանության կապիտան Անի Զավենի Բաղդասարյան – դասախոս

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱՃՅՈՒՂԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. <<Ընդհանուր պատրաստականություն>> կրթաճյուղի դասախոս ոստ. կապիտան Ա.Բաղդասարյան. <<Մեղսունակության և անմեղսունակության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան օրենսդրության զարգացումը>>: Հրապարակվել է <<Օրենքի պատվար >> գիտամեթոդական ամսագրում: